1.	<p>Ապահովագրողի՝</p> <ol style="list-style-type: none"> 1) անվանումը, 2) գտնվելու վայրի հասցեն, 3) հեռախոսահամարները, 4) էլեկտրոնային փոստի հասցեն, 5) ինտերնետային կայքը, 6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման համարը, 7) լիցենզիայի համարը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշվեհամարը:

Նախքան ԱՊՊԱ վկայագրում Ապահովագրի վերաբերյալ տվյալներ լրացնելն ~~անհրաժեշտ է~~ ԱՄՄՊ համակարգում ընտրվում է ~~է~~ ԱՊՊԱ պայմանագրի կնքման հետևյալ տարբերակներից մեկը՝

Ապահովագրման ենթակա Ավտոտրանսպորտային միջոցը՝

1) գրանցված է Հայաստանի Հանրապետությունում, եթե Ավտոտրանսպորտային միջոցը սահմանված կարգով գրանցված է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում: Ընդ որում, «գրանցված է Հայաստանի Հանրապետությունում» տարբերակն ընտրելիս անհրաժեշտ է ընտրել՝

ա. «Հաշվառված է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից », եթե տրանսպորտային միջոցը սահմանված կարգով հաշվառված է Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից,

բ. «Հաշվառված չէ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից » եթե տրանսպորտային միջոցը

սահմանված կարգով հաշվառված չէ Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից:

2) գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում, եթե Ավտոտրանսպորտային միջոցը սահմանված կարգով գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում: Ընդ որում, «գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում» տարբերակն ընտրելիս ~~անհրաժեշտ է~~ ընտրվում է ~~է~~ նաև ստորև նշված տարբերակներից համապատասխան տարբերակը՝

- ա. «Օտարերկրյա հաշվառման համարանիշներով տրանսպորտային միջոց»,
- բ. «Օտարերկրյա տարանցիկ հաշվառման համարանիշներով տրանսպորտային միջոց»,
- գ. «Ժամանակավոր հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց»,
- դ. «Տրանսպորտային միջոց առանց հաշվառման համարանիշի»:

	Ապահովադրի՝	
2.	Ֆիզիկական անձի դեպքում՝	<p>1) Անունը և ազգանունը,</p> <p>2) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկի սերիան և համարը,</p> <p>3) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (չի լրացվում այն անձանց համար, ում, օրենքի համաձայն, հանրային ծառայությունների համարանիշ չի հատկացվում),</p> <p>4) հաշվառման հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,</p> <p><u>5) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում (վճարահաշվարկային կազմակերպությունում) բացված բանկային հաշվեհամարը (էլեկտրոնային փողի հաշվեհամարը)՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար (էլեկտրոնային փողի հաշվեհամար)» բառերի և բանկի (վճարահաշվարկային կազմակերպության) անվանման պարտադիր նշումով: Եթե ԱՊՊԱ պայմանագիրը կնքվում է ՊԿԱ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղում և ներկայացվել է ԱՊՊԱ պայմանագրի շրջանակներում Ապահովադրին վճարման ենթակա գումարներն ստանալու լիազորություններ պարունակող՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիր, ապա կարող է լրացվել նաև լիազորված անձին պատկանող բանկային հաշվեհամարը (էլեկտրոնային փողի հաշվեհամարը)՝ «Ապահովադրի լիազորած անձին պատկանող բանկային հաշվեհամար, (էլեկտրոնային փողի հաշվեհամար)» բառերի և բանկի</u></p>

	<p>(վճարահաշվարկային կազմակերպության) անվանման պարտադիր նշումով: Սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը ենթակա է պարտադիր լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն համապատասխան տեղեկատվությունը ներկայացվելու դեպքում.</p> <p>5) Ապահովադրին — պատկանող — բանկային հաշվեհամարը (բանկային քարտի համարը) (ներկայացվելու դեպքում)՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար (բանկային քարտի համար)» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով, Ընդ որում, բանկային քարտի համարը կարող է լրացվել միայն այն դեպքում, երբ ԱՄՄՊ ում առկա է ծրագրային հնարավորություն — համապատասխան — վճարային համակարգից (վճարային — համակարգերից) ինքնաշխատ եղանակով հավաստիանալ, որ տվյալ բանկային քարտի համարով քարտատերը Ապահովադիրն է՝ առնվազն վերջինի անուն ազգանունների համընկնումն ստուգելու միջոցով, (սույն ենթակետով նախատեսված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրառվելիք):</p> <p>6) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը:</p>
<p>իրավաբանական անձի դեպքում</p>	<p>1) լրիվ անվանումը, 2) ՀՎՀՀ-ն, 3) գտնվելու վայրի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը, 5) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում (վճարահաշվարկային կազմակերպությունում) բացված բանկային հաշվեհամարը (էլեկտրոնային փողի հաշվեհամարը) (ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովադրի կողմից ներկայացվելու դեպքում)՝</p>

		<p>«Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամար)</u>» բառերի և բանկի <u>(վճարահաշվարկային կազմակերպության)</u> անվանման պարտադիր նշումով:</p>
	<p>Հայաստանի Հանրապետության դեպքում</p>	<p>1) պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը, 2) պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 3) Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամարը <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամարը)</u> <u>(ներկայացվելու դեպքում)</u>՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամար)</u>» բառերի և <u>բանկի (վճարահաշվարկային կազմակերպության)</u> անվանման պարտադիր նշումով: 4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը</p>
	<p>Օտարերկրյա պետության դեպքում՝</p>	<p>1) երկիրը, 2) օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը (դեսպանատուն, հյուպատոսարան, այլ), 3) օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 4) Ապահովադրին պատկանող <u>և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում (վճարահաշվարկային կազմակերպությունում) բացված</u> բանկային հաշվեհամարը <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամարը)</u> <u>(ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովադրի կողմից ներկայացվելու դեպքում)</u>՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամար)</u>» բառերի և բանկի <u>(վճարահաշվարկային կազմակերպության)</u> անվանման պարտադիր նշումով: 5) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը</p>

	Համայնքի ղեպքում՝	<p>1) համայնքի անվանումը</p> <p>2) համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանումը,</p> <p>3) համայնքի անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,</p> <p>4) Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամարը <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամարը) (ներկայացվելու ղեպքում)</u>՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամար)</u>» բառերի և բանկի <u>(վճարահաշվարկային կազմակերպության)</u> անվանման պարտադիր նշումով:;</p> <p>5) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը</p>
	Միջազգային կազմակերպության ղեպքում՝	<p>1) միջազգային կազմակերպության անվանումը,</p> <p>2) հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,</p> <p>3) Ապահովադրին պատկանող <u>և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում (վճարահաշվարկային կազմակերպությունում) բացված</u> բանկային հաշվեհամարը <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամարը) (ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովադրի կողմից ներկայացվելու դեպքում)</u>՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար <u>(էլեկտրոնային փողի հաշվեհամար)</u>» բառերի և բանկի <u>(վճարահաշվարկային կազմակերպության)</u> անվանման պարտադիր նշումով:;</p> <p>4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը</p>
3.	<p>Վկայագրով մեկ Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրվելու դեպքում լրացվում են Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցների դեպքում, իսկ մնացած Ավտոտրանսպորտային միջոցների դեպքում՝ օտարերկրյա հաշվառման համարանիշը, դրա բացակայության դեպքում Ավտոտրանսպորտային միջոցի ժամանակավոր հաշվառման համարանիշը, դրա բացակայության դեպքում նույնացման համարը (VIN), իսկ վերջինի բացակայության դեպքում՝ թափքի համարը), Հայաստանի Հանրապետությունից և Արցախի Հանրապետությունից բացի ցանկացած այլ երկրում հաշվառված</p>	

Ավտոտրանսպորտային միջոցի դեպքում՝ նաև 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի 45-րդ հոդվածով սահմանված կարգով տվյալ երկրի կողմից ընտրված տարբերանշանը՝ ենթագրով (subscript, օրինակ՝ «_{RUS H847XC177}»), Ավտոտրանսպորտային միջոցի տեսակը, շարժիչի հզորությունը և դրա օգտագործման նպատակը: Համապատասխան ծրագրային լուծմամբ կարող է նախատեսվել, որ այն Ավտոտրանսպորտային միջոցների տեսակների գծով, որոնց օգտագործման բոլոր նպատակների համար ԱՊՊԱ ապահովագրավճարի հաշվարկում կիրառվում է միևնույն գործակիցը, Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակը չի լրացվում (ավտոմատ կերպով դրվում է գծիկ նշան):

Վկայագրով մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրվելու դեպքում Վկայագրում լրացվում է Ավտոտրանսպորտային միջոցների քանակը, իսկ Վկայագրի հավելվածում յուրաքանչյուր Ավտոտրանսպորտային միջոցի համար լրացվում է սույն կետով մեկ Ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված տվյալները, ընդ որում՝ Վկայագրի հավելվածի տողերն ավելացվում են Ավտոտրանսպորտային միջոցների քանակին համապատասխան:

Որպես Ավտոտրանսպորտային միջոցի տեսակ ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս) կամ տրոլեյբուս նշվելու դեպքում լրացվում է նաև դրա՝ առանց վարորդի նստատեղի հաշվարկված նստատեղերի քանակի մասին տեղեկատվությունը՝ համապատասխանաբար հետևյալ եղանակներից մեկով՝ 1) առանց վարորդի նստատեղի՝ մինչև 17 (ներառյալ) նստատեղ ունեցող կամ 2) առանց վարորդի նստատեղի՝ 17-ից ավելի նստատեղ ունեցող: Ընդ որում, տրոլեյբուսի դեպքում նստատեղերի քանակի մասին տեղեկատվությունը մշտապես լրացվում է 2-րդ եղանակով:

Որպես Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ հիմք է ընդունվում հետևյալ նպատակներից որևէ մեկը (մի քանի նպատակով օգտագործվելու դեպքում նշվում է այն նպատակը, որի համար ԱՊՊԱ ապահովագրավճարի հաշվարկում կիրառվում է ավելի բարձր գործակից)՝

<p>Պայմանագրի գործողության ընթացքում Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ</p>	<p>Նպատակի նկարագրություն</p>
<p>1. Անձնական</p>	<p>Ֆիզիկական անձանց պատկանող Ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք չեն օգտագործվելու սույն մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված նպատակներով</p>
<p>2. Ծառայողական</p>	<p>Ֆիզիկական անձանցից բացի ցանկացած այլ անձին պատկանող Ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք չեն օգտագործվելու սույն մասի 3-</p>

		րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված նպատակներով
	3. Առևտրային	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև ապրանքների փոխադրման և (կամ) ծառայությունների մատուցման նպատակով
	4. Հանրային տրանսպորտ	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև կանոնավոր ուղևորափոխադրումներ կատարելու նպատակով
	5. Պատվերով ուղևորափոխադրումներ	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև պատվերով ուղևորափոխադրումներ իրականացնելու համար, ընդ որում, Ավտոտրանսպորտային միջոցը, անկախ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի առկայության, համարվում է սույն ենթակետով նախատեսված նպատակով օգտագործվող նաև այն դեպքերում, եթե տվյալ Ավտոտրանսպորտային միջոցը ներառված է ուղևորների փոխադրման պատվերների ստացման համար նախատեսված հատուկ էլեկտրոնային հարթակներում (ներառյալ բջջային հավելվածներում) կամ Ավտոտրանսպորտային միջոցի վրա առկա է կահավորման որևէ տարր, որը հանրության մոտ առաջացնում է ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման վերաբերյալ ընկալում (օրինակ՝ հետևյալ տարրերից որևէ մեկը՝ ուղևորների փոխադրման պատվերների ստացման համար նախատեսված հատուկ էլեկտրոնային հարթակների տարբերանշան, կիլոմետրի արժեք, տաքսամետր (սակաչափիչ), տանիքին, դիմապակու վրա կամ որևէ այլ մասում՝ «SU.FUI» (հայերեն կամ օտար լեզվով) գրառում կամ շախմատաձև դեղին և սև տարբերանշան և այլն): (փոփ. է 31/08/2021թ թիվ 30-Լ)
	6. Վարձակալություն	Ավտոտրանսպորտային միջոցը կարող է տրվել նաև վարձակալությամբ:
4.	պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը՝ համապատասխանաբար օր/ամիս/տարի/ժամ և օր/ամիս/տարի ֆորմատներով և հաջորդականությամբ:	
5.	«Ապահովագրավճար առանց ԲՄ դասի» բառերը, որը սույն կանոնների համաձայն հաշվարկված տվյալ պայմանագրի ապահովագրավճարի մեծությունն է՝ առանց ԲՄ դասը հաշվի առնելու և առանց կլորացման,	

	<p>Առանց ԲՄ դասի ապահովագրավճարի չափը՝ «գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ»՝ առանց բացատների ֆորմատով, «Բոնուս» կամ «Մալուս» բառը՝ կախված այն հանգամանքից, թե ապահովադրին տրվում է բոնուս, թե՞ մալուս,</p> <p>Ապահովադրի Բոնուս-Մալուս դասի գործակցի կիրառման արդյունքում ապահովագրավճարի չափին ավելացման կամ նվազեցման ենթակա գումարի մեծությունը՝ «գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ»՝ առանց բացատների ֆորմատով,</p> <p>«Վճարման ենթակա ապահովագրավճար» բառերը և Ապահովադրի կողմից տվյալ պայմանագրով վճարման ենթակա ապահովագրավճարի մեծությունը՝ գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ՝ առանց բացատների ֆորմատով (օրինակ՝ Ապահովագրավճար առանց ԲՄ դասի՝ -45708-ՀՀ դրամ, Բոնուս՝ -2742-ՀՀ դրամ, վճարման ենթակա ապահովագրավճար՝ -43000-ՀՀ դրամ):</p> <p>Այն դեպքում, երբ պայմանագրով ապահովագրվում է մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը, այս մասում նշվում են բոլոր Ավտոտրանսպորտային միջոցների համար հաշվարկված առանց ԲՄ դասի ապահովագրավճարների հանրագումարը, տրամադրվող բոնուսի կամ մալուսի չափը և վճարման ենթակա ապահովագրավճարների հանրագումարը, իսկ յուրաքանչյուր Ավտոտրանսպորտային միջոցի համար համապատասխան տեղեկատվությունը նշվում է Վկայագրին կցվող հավելվածի համապատասխան դաշտում:</p>
<p>6.</p>	<p>ապահովագրավճարի վճարման կարգը, մասնավորապես նշվում է հետևյալ տարբերակներից որևէ մեկը՝</p> <p>1) միանվագ կամ տարաժամկետ վճարում, ընդ որում՝ սույն կանոններով նախատեսված դեպքերում ապահովագրավճարը ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին չվճարվելու և տարաժամկետ վճարման տարբերակ ընտրելու դեպքերում Վկայագրում նշվում է նաև ապահովագրավճարի կամ դրա տարաժամկետվող մասի վճարման կարգն ու ժամկետները,</p> <p>2) կանխիկ կամ անկանխիկ, ընդ որում ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին ապահովագրավճարը (դրա մի մասը) սույն կանոններով նախատեսված կարգով «Կանխիկ» վճարման տարբերակով կնքելու դեպքում Վկայագրում նշվում է նաև տվյալ պահին փաստացի սույն կանոններով սահմանված եղանակներով կանխիկ վճարված ապահովագրավճարի չափը:</p>
<p>8.</p>	<p>ապահովագրողի՝ շուրջօրյա հասանելի, առնվազն երեք միաժամանակյա զանգի սպասարկման հնարավորություն ապահովող առնվազն մեկ հեռախոսահամար, որով Ապահովադիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) կարող է զանգահարել Ապահովագրողին՝ ապահովագրական պատահարի մասին հայտնելու համար:</p>

		Ապահովագրողի անունից հանդես եկող անձի տեսակը	Ապահովագրողի անունից հանդես եկող անձի վերաբերյալ տվյալները
9.	9.1	1) Ապահովագրողի գործադիր մարմնի ղեկավար	Գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը և Ապահովագրողի կնիքն՝ առկայության դեպքում: Վկայագրի՝ Ապահովագրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում՝ միայն գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը: Ընդ որում, Ապահովագրողի կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում «ստորագրություն» դաշտը չի արտացոլվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
		2) Ապահովագրողի գործադիր մարմնի ղեկավար չհանդիսացող այլ լիազորված ֆիզիկական անձ (կիրառելի չէ Ապահովագրողի կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում)	Տվյալ լիազորված ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և տրման ամսաթիվը, և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովագրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
		3) Ֆիզիկական անձ (բացառությամբ անհատ ձեռնարկատեր) ապահովագրական գործակալ (կիրառելի չէ Ապահովագրողի կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում)	Անունը, ազգանունը, որպես գործակալ հաշվառման վկայականի համարը (տրվելու դեպքում), ստորագրությունը, և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովագրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)

		<p>4) Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկետեր ապահովագրական գործակալ (կիրառելի չէ Ապահովագրիչների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում)</p>	<p>Անվանումը, իրավասություն ունեցող անձի անունը, ազգանունը և ստորագրությունը (կնիքն՝ առկայության դեպքում), և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովագրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում կնիք և ստորագրություն չեն դրվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)</p>
9.2	<p>Ապահովագրի անունից հանդես եկող անձի տեսակը</p>		<p>Ապահովագրի անունից հանդես եկող անձի վերաբերյալ տվյալները</p>
	<p>1) Ֆիզիկական անձ ապահովագրի</p>		<p>անունը, ազգանունը և ստորագրությունը: Վկայագրի՝ Ապահովագրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում: Ընդ որում, Ապահովագրիչների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում համաձայնության վերաբերյալ դրույթը և ստորագրությունը պարունակող դաշտերը չեն արտացոլվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)</p>
	<p>2) Իրավաբանական անձ ապահովագրի</p>		<p>անունը և ազգանունը, ստորագրությունը և կազմակերպության կնիքն՝ առկայության դեպքում: Վկայագրի՝ Ապահովագրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն և կնիք չեն դրվում: Ընդ որում, Ապահովագրիչների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում համաձայնության վերաբերյալ դրույթը և ստորագրությունը պարունակող դաշտերը չեն արտացոլվում (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)</p>

		3) Ապահովադրի ներկայացուցիչ	անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և (կամ) տրման ամսաթիվը և ներկայացուցչի ստորագրությունը: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում: (լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)
10.	Ապահովադրին Վկայագիրը տալու ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով և հաջորդականությամբ:		
11.	«է կնքել» կամ «չի կնքել» բառերը՝ կախված այն հանգամանքից, թե այդ տարբերակներից որն է կիրառելի Ապահովագրողի նկատմամբ:		
12.	<p>1) «Կրկնօրինակ» բառը, երբ սույն կանոնների համաձայն Ապահովադրին տրվում է Վկայագրի կրկնօրինակը,</p> <p>2) «Սույն պայմանագիրը կնքվել է կողմերի միջև էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով և դրա՝ սույն կանոններով նախատեսված տեխնիկական պահանջներին բավարարող էլեկտրոնային տարբերակն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը» բառերը՝ Ապահովադրի կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում,</p> <p>3) «Սույն վկայագիրը թղթային եղանակով ստորագրված վկայագրի էլեկտրոնային տարբերակն է» բառերը՝ Ապահովադրի կողմից առցանց էլեկտրոնային եղանակից տարբերվող ցանկացած եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում:</p>		
Վկայագրի հավելվածը, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիրը լրացվում են սույն հրահանգով Վկայագրի համապատասխան կետերով նախատեսված դաշտերի լրացման համար սահմանված կանոններին համապատասխան:			

Ենթահավելված
«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների Հավելված 2.1-ի

1. Սույն ենթահավելվածով սահմանվում է ԱՊՊԱ պայմանագրերի հաշվառման կարգը:

2. Վկայագիրն ունի ծածկագիր, որը բաղկացած է սերիայից և համարից, ընդ որում՝ սկզբից նշվում է սերիան, այնուհետև՝ համարը: Սերիան պարունակում է 2 նիշ, իսկ համարը՝ 6 նիշ՝ սկսած 000001-ից: Վկայագրի ծածկագրերը չեն կրկնվում, անգամ եթե տվյալ ԱՊՊԱ պայմանագիրն այլևս ուժի մեջ չէ:

3. Սերիայի նիշերը մեծատառ են և լատինատառ: Սերիայի առաջին նիշը սահմանվում է «S», որի բոլոր հնարավոր համակցությունների օգտագործումից հետո առաջին նիշը սահմանվում է՝ ըստ լատինական այբուբենի այբբենական հերթականության՝ սկսվելով «A»-ից և չներառելով «S» տառը: Երկրորդ նիշը համապատասխանաբար փոփոխվում է ըստ լատինական այբուբենի այբբենական հերթականության (SA, SB, SC ... SZ, AA, AB, AC, ..., AZ, BA, BB, BC, ..., BZ և այլն):

4. Վկայագրի սերիաները տրամադրվում են ԱՄՄՊ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով: Ընդ որում, յուրաքանչյուր Ապահովագրողի տրամադրվում է առանձին սերիա՝ հերթական համարի բոլոր հնարավոր համակցություններով:

5. Ապահովագրողին տրամադրված սերիայի համարների բոլոր հնարավոր համակցություններն օգտագործվելու դեպքում ԱՄՄՊ համակարգի կողմից ինքնաշխատ տրամադրվում է բոլոր Ապահովագրողներին տրամադրված սերիաներին հաջորդող հերթական չօգտագործված սերիան՝ համապատասխան Ապահովագրողին ծանուցելով հերթական սերիայի տրամադրման վերաբերյալ:

6. Ապահովագրողները վարում են իրենց կողմից կնքված Վկայագրերի, ինչպես նաև վնասված, խոտանված, կորած, հափշտակված և ոչնչացված Վկայագրերի ներքին հաշվառում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.2. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

		N	Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը	Ապահովադրի կողմից ներկայացվող (հայտարարվող) տեղեկությունների ցանկը
Ապահովադրի վերաբերյալ	Ֆիզիկական անձանց համար	1	Անձը հաստատող փաստաթուղթ	<p>1. Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցե,</p> <p>2. Ապահովադրի <u>փոստային հաշվառման (գտնվելու)</u> հասցե,</p> <p>3. Ապահովադրի հեռախոսահամար,</p> <p>4. <u>Ապահովադրին կամ վերջինի կողմից նոտարական կարգով վավերացված լիազորագրով տրամադրված համապատասխան լիազորություններ ունեցող անձին պատկանող քանկային հաշվեհամար (էլեկտրոնային փողի հաշիվ) Ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս) տեսակի Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում՝ Ավտոտրանսպորտային միջոցի՝ առանց վարորդի նստատեղի հաշվարկված նստատեղերի քանակ՝ տեխնիկական տվյալների համաձայն, <u>ընդ որում, սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը համարվում է տրամադրված նաև այն դեպքում, եթե Ապահովադրի անվամբ</u></u></p>
		2	ՀՀ քաղաքացիների դեպքում, եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը չի պարունակում հանրային ծառայությունների համարանիշ, ապա այդ համարանիշը պարունակող փաստաթուղթ (սոցիալական ապահովության քարտ կամ համապատասխան տեղեկանք) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք	
	Իրավաբանական անձաց համար	1	Հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող փաստաթուղթ	
Այլ սուբյեկտների համար				
Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) վերաբերյալ	1	Հաշվառման (գրանցման) վկայագիր կամ այլ համարժեք փաստաթուղթ կամ մաքսային հայտարարագիր և Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն), եթե հաշվառման (գրանցման) վկայագրով		

		<p>կամ այլ համարժեք փաստաթղթով կամ մաքսային հայտարարագրով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասությունը չի հաստատվում: Այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ավտոտրանսպորտային միջոցների գծով ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար հաշվառման (գրանցման) վկայագրի փոխարեն ներկայացվում է իրավասու պետական մարմնի կողմից տվյալ Ավտոտրանսպորտային միջոցին հատկացված հաշվառման համարանիշը</p>	<p><u>քանկային հաշիվը կամ էլեկտրոնային փողի հաշիվը, Ապահովագրի (նրա ներկայացուցչի) համաձայնությամբ, ինքնաշխատ քացվել և ԱՄՄՊ համակարգում արտացոլվել է պայմանագրի կնքման գործընթացում.</u></p> <p>5. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ, 6. ապահովագրության ժամկետ, 7. ապահովագրավճարի վճարման նախընտրելի կարգ և ժամկետ:</p>
	2	<p>Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն)</p>	
<p>Ներկայացուցչի վերաբերյալ</p>	1	<p>Անձը հաստատող փաստաթուղթ</p>	
	2	<p>Ապահովագրի կողմից տրված <u>ԱՊՊԱ պայմանագրի կնքման լիազորությունները հավաստող</u> հասարակ, գրավոր ձևով կազմված լիազորագիր</p>	